

ԹԻՎ 24 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«09» փետրվարի 2024թ.

ք. Վանաձոր

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N1-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐԿԱԾ) ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Լևոն Արարատի Սադաղյանի կողմից թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի մասին դիմումը, որը վավերացված է նոտարական կարգով՝ թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Լևոն Արարատի Սադաղյանի գրանցումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ԹԻՎ 24 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**



Վ. ՎԱՆՅԱՆ